ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ՓԱՍՏԱԲԱՆ ՏԻԳՐԱՆ ԱԹԱՆԵՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննության առնելով Վիլեն Մամիկոնի Գայֆեջյանի 06.06.2018 թվականի (մուտք № 1838-18) բողոքի և զանգվածային լրատվության միջոցների հրապարակումների հիման վրա փաստաբան Տիգրան Աթանեսյանի (արտոնագիր թիվ 78) նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

1. **<u>Դիմումի համառոտ բովանդակությունը և դիմողի պահանջը</u>.**

Վիլեն Գայֆեջյանը **(այսուհետ՝ Դիմող),** ներկայացուցչի միջոցով, դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ **(այսուհետ՝ Պալատ)**, հայտնել է, որ 03.06.2018թ. փաստաբան Տիգրան Աթանեսյանի ֆեյբուքյան կայքում նրա կողմից տեղադրված հրապարակման մեկնաբանություններում, Վիլեն Գայֆեջյանը մեկնաբանություն է թողել՝ գրելով հետևյալը *«Հույս ունեմ ուժեղ սարկազմա... էն կարգի, որ դաժե ես ՅԻՆԻԿՍ, չընկալեցի»:*

Վիլեն Գայֆեջյանի կողմից վերոհիշյալ մեկնաբանությունը գրելուց հետո Տիգրան Աթանեսյանը Վիլեն Գայֆեջյանի կողմից գրված մեկնաբանությանը պատասխանել է *«ճշմարտությունա, համեցի, իրար հետ համոզվենք»*, որին Վիլեն Գայֆեջյանը պատասխանել է, որ *«ճշմարտությունը մի բանա էս պարագայում... որ ինքը ցուցարարա ծեծել ու դրա համար պետքա պատասխան տա... մարդկային հատկանիշները ընգնում են 5րդ պլան... մերսի հրավերի համար, բայց մեծ հաճույքով մերժում եմ...»:* Փաստաբան Տիգրան Աթանեսյանը, նշելով Վիլեն Գայֆեջյանի անունը, պատասխանել է *«դե սիկտիր եղի, այ դիշովկա»*, որից հետո ջնջել է իր հրապարակումը և արգելափակել Վիլեն Գայֆեջյանի էջը:

Դիմողը նշել է, որ մինչև նրա կողմից իր իսկ հրապարակման ջնջելը Վիլեն Գայֆեջյանը կատարել է այդ հրապարակման մեկնաբանությունների սքրինշոթ:

Դիմողը հայտնել է նաև, որ 05.06.2018թ, Տիգրան Աթանեսյանն Ազատություն Ռադիոկայանի ֆեյսբուքյան ուղիղ եթերի ժամանակ հաստատել է այն փաստը, որ ինքը վիրավորել և հայհոյել է Վիլեն Գայֆեջյանին, որոշ օգտատերերի, նշելով, որ *«Վիլենը թող իրեն կարգին պահի և աչոկ չհավաքի»:*

06 հունիսի 2018թ.
թիվ 236-Ա/ԿԳ-18107

Ըստ Դիմողի, փաստաբանը թույլ է տվել փաստաբանին ոչ վայել, ավելին՝ լկտի վարքագիծ, ինչը բնականաբար հանդիսանում է Պալատի կողմից հաստատված վարքագծի կանոնների խախտում: Անվիճելի է այն փաստը, որ մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական և այլ բնագավառներում իր գործունեությամբ փաստաբանը պետք է նպաստի փաստաբանի մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը, և ոչ թե հայհոյախառն արտահայտություններ շռայլի հանրության նկատմամբ (ընդ որում վերջինիս կողմից հայհոյանքներ տրվել է ոչ միայն Դիմողի, այլ նաև այլ օգտատերերի հասցեին):

Դիմողը խնդրել է հարուցել կարգապահական վարույթ՝ փաստաբան Տիգրան Աթանեսյանին պատասխանատվության ենթարկելու և արտոնագրից զրկելու հարցը քննարկելու նպատակով:

Գրությանը կից ներկայացվել է Տիգրան Աթանեսյանի կողմից կատարված գրառման սքրինշոթերը:

2. <u>Զանգվածային լրատվամիջոցների հրապարակումների համառոտ բովանդակությունը.</u>

Պալատի մամուլի խոսնակի 06.06.2018թ. զեկուցագրով ներկայացվել են հետևյալ տեղեկությունները և նյութերը՝

2.1 «Հրապարակ» օրաթերթի 05.06.2018թ. N 101 (2387) համարում նշվել է՝

«*Էրեբունիում անկարգությունների գործով ձերբակալվածներն ազատ արձակվեցին, բացի մեկից: Հատկապես մեծ աղմուկ բարձրացավ Մասիսի քաղաքապետի և փոխքաղաքապետի ազատման առիթով:*

Մարդկանց զայրացրել էր փաստաբան Տիգրան Աթանեսյանի գովեստը՝ ուղղված իր պաշտպանյալներին: Մեր տեղեկություններով՝ նրա և ակտիվիստների հայհոյախառն երկխոսության «սքրինշոտերը» ներկայացվել են Փաստաբանների պալատ՝ խնդրելով պատժել փաստաբանին: ..»:

Նույն տեղեկություններին անդրադարձել են նաև էլեկտրոնային լրատվամիջոցներ, մասնավորապես՝

- «Երևան Նյուզ» լրատվական կայքը http://yn.am/?index&p=87186&l=am ,
- Շաբաթ.am լրատվական կայքը՝ https://shabat.am/am/article/181097/Tigran-Atanesyani-u-aktivistneri-hayhoyakharn :

2.2 Հայկական ժամանակ-ի armtimes.com լրատվական կայքի 05.06.2018թ. «**Մասիսի քաղաքապետի փաստաբանի դեմ դատական հայց են ներկայացնելու**» վերտառությամբ հրապարակման մեջ նշվել են՝

- «*...Ֆեյսբուքահայության մոտ դժգոհությունների ալիք առաջացավ, եւ դրանք վերածվեցին մեկնաբանությունների, Աթանեսյանի հրապարակած լուսանկարի տակ: Մասնավորապես, Աթանեսյանը «SOS» համացանցային հաղորդման համահեղինակ եւ հաղորդավար Վիլեն Գայֆեջյանի մեկնաբանություններից մեկին վիրավորելով էր պատասխանել:*»

«*Աթանեսյանը նաեւ հայհոյել էր մի շարք օգտատերերի, ովքեր դժգոհություններ էին հայտնել լուսանկարի եւ դրա հետ արված գրառման հետ*

կապված, բայց քանի որ հայհոյանքները էթիկայի սահմաններից դուրս էին «Հայկական Ժամանակ»-ը դա չի տեղադրել:»:

Այնուհետև նույն կայքում ներկայացվել է հարցազրույցը փաստաբան Տիգրան Աթանեսյանի հետ՝

«- Պարոն Աթանեսյան, քաղաքացիները ձեր հրապարակած լուսանկարի եւ դրա հետ գրված գրառման շուրջ դժգոհություններ էին արտահայտել, դուք ոմանց շատ կոպիտ պատասխան էիք տվել, ոմանց անգամ հայհոյել էիք, ի՞նչն էր դրա պատճառը:

- Նախ հարցի ձեւակերպմանը կատեգորիկ համաձայն չեմ: Ես վստահ չեմ, որ դրանք քաղաքացիներ են, եթե դուք նկատի ունեք ֆեյք կամ անդաստիարակ մեկը, որը ինձ վիրավորում է, եւ այդ վիրավորանքին ես պատասխանում եմ, ապա շատ լավ եմ անում, որ վիրավորանքին պատասխանում եմ: Դա ֆեյքային հարձակում էր, մոտավորապես 300 ֆեյք, որոնց 80 տոկոս էջերը գրեթե միանման էին, եւ քերականական ոճը, իմաստային ոճը ինձ հուշում է, որ դա ընդհանուր միգուցե 5-ից 10 հոգու կողմից ղեկավարվող կազմակերպած հարձակում էր, որը տհաճ բան է, բայց ես հասկանում եմ, որ հիմա այս էմոցիոնալ անցքի վրա, մարդիկ առանց հարցի էությունը հասկանալու ինձ էին թիրախավորել, որը շատ ծիծաղալու էր:..»:

Հոդվածում ներկայացվել են նաև նկարներ օգտատերերի գրառումներով (http://www.armtimes.com/hy/article/138566):

2.3 Ազատություն ռադիոկայանի ֆեյսբուքյան էջում «**ՖԲ ասուլիս փաստաբան Տիգրան Աթանեսյանի հետ**» խորագրի ներքո ներկայացված են օգտատերերի հարցերը, որոնց կցված են նաև գրառումների արտանկարներ (սքրինշոտեր):[1]

Տիգրան Աթանեսյանը ֆեյսբուքյան հարցազրույցի ժամանակ պատասխանել է Ազատություն ռադիոկայանի լրագրողի հարցերին, որոնք վերաբերում էին Տիգրան Աթանեսյանի կողմից կատարված ֆեյսբուքյան գրառումներին:

3. <u>Պալատի եզրահանգումը և որոշումը.</u>

Գտնում եմ, որ բողոքի և զանգվածային լրատվամիջոցների հրապարակումների հիման վրա փաստաբան Տիգրան Աթանեսյանի նկատմամբ պետք է հարուցել կարգապահական վարույթ՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի **(այսուհետ նաև՝ Օրենք)** 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն. փաստաբանը պարտավոր է պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները: Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:*

Օրենքի 39.1-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ *փաստաբանի*

[1] www.facebook.com/events/241028163319086/?active_tab=discussion

նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առիթներն են՝ պետական, տեղական ինքնակառավարման և ոչ պետական մարմինների, ինչպես նաև այլ անձանց դիմումները (բողոքները), ինչպես նաև զանգվածային լրատվամիջոցների հրապարակումները:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *կարգապահական վարույթ հարուցելու հիմքն է փաստաբանի արարքի մեջ սույն օրենքի կամ փաստաբանի վարքագծի կանոնագրքով նախատեսված պահանջների խախտման հատկանիշների առերևույթ առկայությունը:*

Դիմումի և վերոհիշյալ հրապարակային նյութերի համաձայն՝

3.1. 2018թ. հունիսի 3-ին առերևույթ **Տիգրան Աթանեսյան** (Tigran Atanesyan) օգտատերը՝

ա) *Вилен Гайфеджян օգտագործող (**ըստ armtimes.com-ի հարցազրույցի քաղաքացի Վիլեն Գայֆեջյան**) հետ հետևյալ «քննարկումն» է կատարել՝*

***Վիլեն Գայֆեջյան** – Հույս ունեմ ուժեղ սարկազմա ... էն կարգի, որ դաժե ԵՍ ՅԻՆԻԿՍ, չընկալեցի...*

***Տիգրան Աթանեսյան** – Ճշմարտությունա, համեցի, իրար հետ համոզվենք*

***Վիլեն Գայֆեջյան** – Ճշմարտությունը մի բանա էս պարագայում.. որ ինքը ցուցարարա ծեծել ու դրա համար պետքա պատասխան տա.. մարդկային հատկանիշները ընգնում են 5րդ պլան..մերսի հրավերի համար, բայց մեծ հաճույքով մերժում եմ...*

***Տիգրան Աթանեսյան** – Vilen Gaifejian դե սիկտիր եղի, այ դիշովկա*

***Վիլեն Գայֆեջյան** – ահահահա...շատ ծիծաղելու ես))*

բ) Artur Artur օգտատիրոջ կողմից վիրավորական գրառմանը **Տիգրան Աթանեսյան** (Tigran Atanesyan) օգտատերը պատասխանել է՝ ***բ..հ[2] տղա, ընտանիքիդ գերեզմաններին թքեմ:***

գ) Gigi Vardanyan օգտատիրոջ կողմից վիրավորական գրառմանը **Տիգրան Աթանեսյան** (Tigran Atanesyan) օգտատերը պատասխանել է՝ ***պոռնիկը քո մերնա, այ գ...հ[3] տղա ֆեյք, սքրինշոթ արա, թող քո նման բ..հ[4] տղերքը տարածեն:***

դ) Arsen Chil-gevorkian օգտատիրոջ կողմից վիրավորական գրառմանը **Տիգրան Աթանեսյան** (Tigran Atanesyan) օգտատերը պատասխանել է՝ ***տո այ բ..հ[5] տղա:***

3.2 Ազատություն ռադիոկայանի 05.06.2018թ. ֆեյսբուքյան ասուլիսի ժամանակ[6], առերևույթ Տիգրան Աթանեսյանը արդարացրել է իր կողմից դրսևորած վարքագիծը և շարունակել է նույն ոճով վիրավորական

---

[2] Ամբողջական բառը սույն որոշման մեջ չի նշվել
[3] Ամբողջական բառը սույն որոշման մեջ չի նշվել
[4] Ամբողջական բառը սույն որոշման մեջ չի նշվել
[5] Ամբողջական բառը սույն որոշման մեջ չի նշվել
[6] https://www.youtube.com/watch?v=DO63Woo-wHs

արտահայտություններ կատարել, այդ թվում առերևույթ վիրավորելով հարց տվողներին, մասնավորապես հնչել են հետևյալ հարց ու պատասխանը՝

ա) ***լրագրող***- *«այստեղ դրված են սքրինշոթեր, որոնք եթերի համար չեն, Վիլեն Գայֆեջյանը ՍՕՍ հաղորդաշարի հաղորդավարը գրել էր հուսով եմ ուժեղ սարկազմա, էն կարգի, որ դաժե ես ցինիկս, չընկալեցի: Եվ դուք էնտեղ ներքևում հայհոյել եք նրան: Ուզում եմ հասկանալ ինչու պոռթկացիք:»*

Տիգրան Աթանեսյան- *«նախ հարց տվողները թող իրենց Թերեզ մամի տեղ չդնեն ու բարոյականություն ու բարոյախոսություն չանեն: Իհարկե ֆեյսբուքյան ասուլիսն իրենց հնարավորություն է տալիս հարցեր ընձեռելու, բայց կներեք կրակը չընկանք, որ Սթիվս Ջոբսը ստեղծեց սմարթֆոն կամ ով որ ստեղծեց և տվեց ձեր ձեռքը: Պարոնայք, մի քիչ հետևեք ձեր դաստիարակությանը և մնացածին:* ***<u>Հայհոյանքս եղել է ի պատասխան</u>****, բայց քանի որ դա պրոֆեսիոնալ ֆեյքային հարձակում էր, ջնջում էին իրենց հայհոյանքը,* ***<u>թողնում էին իմ հայհոյանքը...</u>****» (****Տեսանյութի 6:03 րոպեից****):*

բ) Տիգրան Աթանեսյանը նշում է *«Վիլենը թող իրեն կարգին պահի և աչոկ չհավաքի* (***Տեսանյութի 7:19 րոպեից***):

գ) Տիգրան Աթանեսյանն իրեն հարց տվողների վերաբերյալ նշում է- «*սրանք 37 թվականին դանոս գրածների թոռներն են*» (***Տեսանյութի 15:43 րոպեից***):

Վերոհիշյալ նյութերում և դիմումում նշված վիրավորական գրառումները (արտահայտությունները) և հայհոյանքները հրապարակային հարթակներում փաստաբան Տիգրան Աթանեսյանի կողմից կատարված լինելու փաստը, ինչպես նաև կատարված հայհոյանքները և վիրավորական գրառումները կամ արտահայտություններն արդարացնելու և հրապարակային հարթակում շարունակելու վարքագիծը հաստատվելու դեպքում, փաստաբան Տիգրան Աթանեսյանի վարքագիծը կարող է հակասել **«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի և ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի** (**այսուհետ՝ Կանոնագիրք**) 2.2.3 ենթակետի պահանջին:

Կանոնագրքի 2.2.3 ենթակետի համաձայն՝ ***մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական և այլ բնագավառներում իր գործունեությամբ փաստաբանը պետք է նպաստի փաստաբանի մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը:***

Նշված կանոնից հետևում է, որ փաստաբանը մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական և այլ բնագավառներում իր գործունեության ընթացքում չպետք է կատարի այնպիսի արարք, որը կարող է վնասել փաստաբանի մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը:

Կանոնագրքի 1.1 ենթակետը նախանշում է նաև փաստաբանի դերը հասարակության մեջ, մասնավորապես՝ «***<u>Իրավունքի գերակայության հանդեպ</u>***

<u>ունեցած հարգանքի վրա հիմնված հասարակության մեջ փաստաբանը հատուկ դեր է ստանձնում:</u> *Փաստաբանի պարտականությունները չեն սկսվում և ավարտվում միայն հանձնարարականների բարեխիղճ կատարմամբ: ....*

Փաստաբանի մասնագիտական գործունեության հանդեպ հարգանքը կարևոր պայման է հասարակության մեջ իրավունքի գերակայության և ժողովրդավարության համար:

<u>Փաստաբանի գործունեությունը, հետևաբար, իր վրա դնում է բազմազան իրավական և բարոյական պարտավորություններ (երբեմն իրար հակասող)՝</u>

– վստահորդի նկատմամբ;

– դատարանների և այլ իրավապահ մարմինների առաջ, որտեղ փաստաբանը պաշտպանում է գործը և հանդես է գալիս վստահորդի անունից;

– իրավաբանի մասնագիտության հանդեպ ընդհանրապես և այդ ոլորտի յուրաքանչյուր անդամի նկատմամբ մասնավորապես;

– հասարակության նկատմամբ, որի համար ազատ և անկախ մասնագիտության առկայությունը՝ համակցված այդ մասնագիտությանը վերաբերող կանոնների նկատմամբ հարգանքով, Մարդու իրավունքների պաշտպանության կարևոր միջոց է՝ ի նպաստ Հայաստանի Հանրապետության հզորության և հասարակության այլ շահերի:»:

Փաստաբանի՝ որպես անհատի գործունեությունը հասարակության կողմից անուղղակի նույնացվում է փաստաբանական հանրույթի հետ, ուստի փաստաբանն իր մասնագիտական, հասարակական և հրապարակախոսական գործունեության իրականացման ընթացքում պետք է դրսևորի այնպիսի վարքագիծ, որը կնպաստի փաստաբանի կոչման և առաքելության նկատմամբ հարգանքի և վստահության բարձրացմանը, ինչը փաստաբանի բարոյական պարտավորությունն է:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ և 5-րդ կետերի համաձայն՝ Փաստաբանների պալատի խնդիրներն են՝ *4) վերահսկողություն իրականացնել իր անդամների կողմից ..... փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների պահպանման ..... նկատմամբ. 5) միջոցներ ձեռնարկել **<u>փաստաբանության</u>** հեղինակության բարձրացման ուղղությամբ*: Փաստաբանության հասկացությունը տրված է նույն օրենքի 3-րդ հոդվածում, որի համաձայն՝ *Փաստաբանությունը **<u>փաստաբանների մասնագիտական միավորում է,</u>** որը, հանդիսանալով քաղաքացիական հասարակության ինստիտուտ, չի մտնում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համակարգի մեջ:*

Նշված իրավական նորմերի վերլուծությունից միանշանակ պարզ է դառնում, որ փաստաբանի կողմից Կանոնագրքի համապատասխան պահանջը խախտելու (առիթի և հիմքի առկայության) դեպքում հարուցվում է կարգապահական վարույթ, ինչի արդյունքում Պալատի խորհուրդը խախտում կատարած փաստաբանին ենթարկում է կարգապահական պատասխանատվության, դրանով իսկ դրականորեն ազդելով բոլոր փաստաբանների հավաքական միավորում հանդիսացող փաստաբանության հեղինակության վրա:

Եվրոպայի փաստաբանների միությունների և իրավական համայնքների

խորհրդի (CCBE-ի) կողմից հաստատված եվրոպական իրավական մասնագիտության հիմնական սկզբունքների վերաբերյալ կոմենտարների «դ» կետի համաձայն՝ *Փաստաբանը, որպեսզի հարգվի իր վստահորդների, երրորդ անձանց, դատարանների և պետության կողմից, պարտավոր է արժանանալ այդ հարգանքին: Դա հնարավոր է անդամագրվելով հեղինակային մասնագիտությանը. հետևաբար,* ***փաստաբանը չպետք է անի այն ամենը, ինչը կարող է հեղինակազրկել ինքն իրեն կամ առհասարակ փաստաբանությանը, որպես մասնագիտություն, կամ թուլացնել տվյալ մասնագիտության նկատմամբ հասարակության վստահությունը****: Դա չի նշանակում, որ փաստաբանը պետք է լինի կատարյալ անձնավորություն, բայց դա նշանակում է, որ նա չպետք է ցուցաբերի ոչ հարիր վարքագիծ, թե փաստաբանություն, թե այլ տեսակի գործունեություն իրականացնելիս, թե նույնիսկ մասնավոր կյանքում, որով հնարավոր է որ վարկաբեկվի տվյալ մասնագիտությունը*[7]*:*

ՀՀ սահմանադրական դատարանի 2016թ. ապրիլի 5-ի թիվ ՍԴՈ-1263 որոշմամբ դատարանը նշել է. *«Ինքնանպատակ չէ այն հանգամանքը, որ ի տարբերություն 2005թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի, որի 1-ին մասի 1-ին նախադասությամբ ամրագրված դրույթով սահմանված էր իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը, 2015թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 64-րդ հոդվածը, որը վերաբերում է դիտարկվող իրավունքին, պարունակում է 2-րդ մաս, որի 1-ին նախադասությամբ ամրագրված է հետևյալ դրույթը. «Իրավաբանական օգնություն ապահովելու նպատակով երաշխավորվում է անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության վրա հիմնված փաստաբանության գործունեությունը»: Դրանով իսկ պետությունն ընդլայնել է որակյալ իրավաբանական օգնություն ցուցաբերելու իր պոզիտիվ պարտականության շրջանակները* ***<u>սահմանադրական մակարդակի բարձրացնելով փաստաբանության որպես որակյալ իրավաբանական օգնություն տրամադրող ինստիտուտի դերը</u>****»:*

Հաշվի առնելով հանրային հարթակներում հայհոյանքների և վիրավորանքների հետ կապված փաստաբան Տիգրան Աթանեսյանի առերևույթ շարունակական վարքագիծը և այդ պատճառով հանրային ուշադրությունը բացասական իմաստով փաստաբանական միավորման նկատմամբ սևեռելը, գտնում եմ, որ փաստաբան Տիգրան Աթանեսյանի նշված վարքագիծը ենթակա է գնահատման նաև հետևյալ տեսակետներից՝

- ***արարքը դիտավորությամբ է կատարված, թե՝ ոչ.***
- ***վիրավորանքները, հայհոյանքները, այնուհետև շարունակական վիրավորանքները և իր այդ վարքագծի արդարացման արարքը ակնհայտ կոպիտ կարգապահական խախտում է, թե՝ ոչ:***

Միաժամանակ, պետք է հաշվի առնել նաև մի շարք հանգամանքներ, այն է՝

- ինչ է նախորդել այդ գրառումներին.
- արդյոք փաստաբան Տիգրան Աթանեսյանի նկատմամբ անօրինական

[7] Տե՛ս CCBE A Commentary on the Charter of Core Principles of the European Legal Profession ***Principle (d)***

գործողություններ են թույլ տրվել, թե՝ ոչ.

- արդյոք փաստաբան Տիգրան Աթանեսյանն այլ միջոց չուներ քան իր կողմից ընտրված արձագանքման եղանակը.

- արդյոք միջամտել են Տիգրան Աթանեսյանի մասնագիտական գործունեությանը, թե՝ ոչ և եթե այո, ապա արդյոք դա փաստաբանին իր վստահորդի հետ նույնացնելու պատճառով է (փաստաբանն է նույնացրել իրեն իր վստահորդի հետ, թե՝ քաղաքացին):

Սույն որոշմամբ կարգապահական վարույթը հարուցվում է փաստաբան Տիգրան Աթանեսյանի կողմից վերոհիշյալ նյութերում (այդ թվում՝ տեսանյութում) նշված վիրավորական գրառումները (արտահայտությունները) և հայհոյանքները հրապարակային հարթակներում փաստաբան Տիգրան Աթանեսյանի կողմից կատարելու, ինչպես նաև կատարված հայհոյանքները և վիրավորական գրառումները կամ արտահայտություններն արդարացնելու և հրապարակային հարթակում շարունակելու վարքագիծը ստուգելու նպատակով:

* * *

Միաժամանակ, հարկ է արձանագրել, որ փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելն ինքնին չի նշանակում, որ փաստաբանը թույլ է տվել կարգապահական խախտում և այդ հարցի վերջնական պատասխանը կարող է տրվել միայն կարգապահական վարույթի իրականացման արդյունքում՝ Պալատի խորհրդի համապատասխան որոշմամբ:

Հաշվի առնելով, որ կարգապահական վարույթ հարուցելու հարցը քննարկվում է զանգվածային լրատվամիջոցների հրապարակումների առիթով, գտնում եմ, որ սույն որոշումը պետք է նաև հրապարակել Պալատի կայքէջում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի, 39.1 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի, 39.1 հոդվածի 4-րդ մասի, 39.3 հոդվածի, Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 10-րդ հոդվածի պահանջներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Փաստաբան Տիգրան Աթանեսյանի (արտոնագիր թիվ 78) նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի և Կանոնագրքի 2.2.3 ենթակետի պահանջների խախտման հատկանիշներով (կարգապահական գործ թիվ ԿԳ-18107):

2. Նշված կարգապահական վարույթով դիմող ճանաչել Վիլեն Մամիկոնի Գայֆեջյանին:

3. Համապատասխան դիմում ներկայացնելու դեպքում՝ սույն կարգապահական վարույթով դիմող կամ դիմողներ ճանաչել նաև այն անձին կամ անձանց, ովքեր հանդիսացել են փաստաբան Տիգրան Աթանեսյանի

գրառումների հասցեատերերը կամ առնչվել են այդ գրառումներին:

4. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարի տեղակալին՝

– կարգապահական գործը սահմանված կարգով հանձնել հերթական կարգապահական գործ նախապատրաստող փաստաբանին.

– սույն որոշման օրինակը ուղարկել դիմողին և փաստաբան Տիգրան Աթանեսյանին՝ պարզաբանելով նրանց «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.2 հոդվածով նախատեսված իրավունքները.

– ապահովել սույն որոշման հրապարակումը Պալատի կայքէջում:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝ Արա Զոհրաբյան

06 հունիսի 2018թ.
թիվ 236-Ա/ԿԳ-18107
ք. Երևան